«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱԾԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Էպոսի դերը հայրենասիրության և ազգային արժեհամակարգի ձևավորման գործում

Առարկան՝ Հայոց լեզու և գրականություն

Հետազոտող ուսուցիչ՝ Նինա Սիմոնյան

Ուսումնական հաստատություն՝ Աքորու միջնակարգ դպրոց

Երևան 2023

Նպատակ

1. Ուսումնասիրել ազգային էպոսի դաստիարակչական ու հայրենասիրություն սերմանող հատվածները համաշխարհային գրականության մեջ:

2. Սասունցի Դավթի կերպարով սովորեցնել հայրենասիրություն սովորողի մոտ:

3.<<Սասունցի Դավիթ>> էպոսի կերպարների վերլուծության շնորհիվ ձևավորել ազգային արժեհամակարգ:

Խնդիրներ

1. Դիտարկել ազգերի պատմության մեջ էպոսի դերն ու նշանակությունը:

2. <<Սասունցի Դավիթ>> էպոսի դասավանդումը դպրոցում որպես արժեհամակարգի ձևավորման միջոց:

3. Ուսումնասիրել <<Սասունցի Դավիթ>> էպոսի դասավանդման մեթոդիկան հիմնական դպրոցի աշակերտի համար:

4. Հայրենասիրական մոտիվը <<Սասունցի Դավիթ>> էպոսում:

Բովանդակություն

Ներածություն.....3

Գլուխ 1. Ազգային էպոսներ.....3-5

Գլուխ 2. <<Սասունցի Դավիթ>> էպոսը և նրա դերը ազգային արժեհամակարգի ձևավորման գործում 5-7

Գլուխ 3. Հայերնասիրական մոտիվը վիպերգում.....7-16

Գլուխ 4. 9-րդ դասարանում դասավանդելու մի քանի մեթոդներ.....

Եզրակացություն.....16

Գրականության ցանկ.....17

Ներածություն

<<Հայկական էպոսը հայ ցեղի ապրած կյանքի և հոգեկան կարողությունների հոյակապ գանձարան է ու իր մեծության անհերքելի վկայությունն աշխարհի առջև>>: Հ. Թումանյան

Էպոսը(դյուցազնավեպը) վիպական բնույթի բանավոր մեծածավալ ստեղծագործություն է, որը ձևավորվում է տարբեր ժողովուրդների ստեղծագործական ուժերով՝ ժողովրդի համար բախտորոշ նշանակություն ունեցող պատմական ժամանակաշրջաններում և ներկայացնում է ժողովրդի հավաքական մտածողությունը, ազգային բնավորությունը, կենցաղը,բարքերը, լուսավոր ապագայի անխախտ հավատը: Էպոսի գլխավոր հերոսը գերբնական ուժով օժտված ազնիվ ու արդարադատ մարտիկն է:

«Սասունցի Դավիթ» էպոսի համահավաք բնագրի յուրացումը պարտադիր է ոչ միայն ավագ դպրոցի աշակերտների, այլև մանկավարժական համալսարանի և ինստիտուտների բոլոր ֆակուլտետների ուսանողության համար, որովհետև դրանք բոլորը պատրաստում են ապագա ուսուցչին, որն իր ազգային մտածողությամբ ու համամարդկային ընկալումներով առաջադեմ լինելու պարտավորվածությունն ունի:

Աշխատանքում ներկայացված են ազգային էպոսների պատմական ակնարկ, մեր էպոսի դերն ու նշանակությունը համաշխարհային էպոսագիտության ասպարեզում, վերջինիս ՝ իններորդ դասարանում սովորողի դաստիարակչական ՝ հայրենասրություն և արժեհամակարգ ձևավորելու գործում դերը, դասավանդման մի քանի տարբերակներ:

Գլուխ 1 Ազգային էպոսներ

Ազգային էպոսը էպիկական բովանդակությամբ էպիկական ժանրի բանաստեղծության կամ գրականության գործ է, որը ավանդաբար ներկայացնում կամ արտացոլում է որևէ ազգի մշակութային կամ ինքնահանաչողական ոգին, դա կարող է վերաբերել նաև ինքնուրույնության կամ անկախության ձգտող որևէ էթնիկական կամ լեզվաբանական խմբի□ Ազգային էպոսների մեջ հաճախ նկարագրվում է տվյալ ազգային էթնոսի ծագման և զարգացման պատմությունը. կամ պատմության մի մասը, կամ տվյալ ազգության ինքնորոշման կամ ինքնագիտակցման պատմության կարևորագույն դրվագները և այլ ազգային խորհրդանշանների ծագման կամ ընդունման պատմությունը:

Աշխարհի բոլոր ժողովուրդները ունեն էպոսներ.

- «Աբրահամիս» բաբելոնյան
- «Էնումա էլիշ» բաբելոնա–ասիական

• «Ռամայանա», «Մահաբհարաթա», «Բհագավաթգիտա» հնդկական

• «Իլիական», «Ոդիսական», «Թեոգոնիա», «Արգոնավորդներ», «Ցիվիադա» հունական • «Էնեական» հռոմեական/իտալական

• «Դիգենիուս Ակրիտոս» բյուզանդական

• «Ասք Հիլդեբրանդի մասին» հին գերմանական

• «Ասք Նիբելունգների մասին», «Կուդրուն» միջնադարյան գերմանական

• «Ավագ Էդդա», «Կրտսեր Էդդա» սկանդինավյան

• «Ասք Վյոլսունգների մասին»

• «Երգ Հայավաթայի մասին» ամերիկյան

• «Բեովուլֆ» անգլոսաքսոնական

• «Վիդսիդ»

• «Ցինսբուրգի ճակատամարտը»

• «Բրունանբուրգի ճակատամարտը»

• «Մելդոնի ճակատամարտը»

• «Վալդերե»

• «Ասք Իգորի ճակատամարտի մասին», «Բիլինա» ռուսական

• «Բեյբարս» միջնադարյան եգիպտական

• «Ասք Ռոլանդի մասին», «Ասք Գիյոմի մասին» ֆրանսիական

• «Ասք Սիդի մասին» իսպանական

• «Լուզիադներ» պորտուգալական

• «Կալեվալա» կարելա–ֆիննական

• «Կալևիպոեգ» էստոնական

• «Լաչպլեսիս» լատվիական

• «Օլոնխո» յակուտական

• «Ջանգար» կալմիկական

• «Վագրենավորը» վրացական

• «Շահնամե» պարսկական

• «Մանաս» ղրղզական

• «Սասնա Ծռեր», «Պարսից պատերազմ» հայկական

• «Ալփամըշ» ուզբեկական, ղազախական, կարակալպակյան

• «Նարտյան էպոս» հյուսիս–կովկասյան (ադըղներ, աբազիններ, աբխազներ և այլն) • «Այյամ ալ–Արաբ» («Արաբների օրերը») արաբական

• «Ուրալ–բատիր» բաշկիրական

• «Ամիրանիանի», «Էթերիանի» վրացական

• <<Գիլգամեշ>> շումերական

Էպոսների միջազգային մրցույթը կայացել է1964- ին. մեր էպոսը զբաղեցրել է առաջին տեղը:

«Սասնա ծռեր» էպոսն ընդգրկված է Հայաստանի Հանրապետության ոչ նյութական մշակութային ժառանգության արժեքների ցանկում: Ոչ նյութական մշակութային ժառանգության պաշտպանության կոնվենցիայի Միջկառավարական կոմիտեի 7-րդ նստաշրջանը 2012 թվականի դեկտեմբերի 5- ին «Սասնա ծռեր կամ Սասունցի Դավիթ էպոսի կատարողական դրսևորումները» հայտն ընդգրկել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի Մարդկության ոչ նյութական մշակութային ժառանգության ներկայացուցչական ցանկում:

Գլուխ **2** <<Սասունցի Դավիթ>> էպոսը և նրա դերը ազգային արժեհամակարգի ձևավորման գործում

Մեր ժողովրդի էպոսը ստեղծվել է VIII-X դարերում,երբ հայ ժողովուրդը ազգային-ազատագրական պայքար էր մղում արաբների դեմ: Սակայն նրա արմատները մխրճված են վաղնջական ժամանակների խորքերում, առասպելական ու պատմական զրույցներում: Այս դարերում է վերջնականապես ձևավորվել, որովհետև հայ ժողովուրդը վերակերտեց իր թագավորությունը՝ Բագրատունիների հարստության հաստատմամբ. Սկսվեց խաղաղ կյանքի հարյուրամյա ժամանակաշրջանը, և մեր ժողովուրդը անմահացրեց իր անձնուրաց զավակների հերոսական կերպարները և հաղթական կռիվների արդյունքում վերականգնված պետականության կառուցումը: Վիպասացների և բանահավաքների կողմից այն կոչվել է նաև «Սասնա փահլևաններ», «Սասնա տուն», «Ջոջանց տուն», «Սասունցի Դավիթ կամ Մհերի դուռ», «Դավիթ և Մհեր», «Դավթի պատմություն», «Դավթի հեքիաթ» և այլն: Էպոսի գաղափարական ոգին հայ ժողովրդի հերոսական մաքառումն է թշնամիների դեմ՝ հանուն ժողովրդի ազատության և անկախության, հայրենիքի և պետականության պահպանման:

Էպոսը համահավաք տարբերակով կոչվում է «Սասնա ծռեր»: «Ծուռ» բառն այս պարագայում ունի իմաստային մի քանի նշանակություններ՝ դիվահար, խենթավուն, խելահեղ քաջ և այլն: Տվյալ հատկանիշներից յուրաքանչյուրն էպոսի հերոսների համար բնորոշ է այս կամ այն պարագայում: «Սասնա ծռեր» էպոսը կառուցվածքային առումով կազմված է վիպական չորս մասերից կամ ճյուղերից, որոնցից յուրաքանչյուրը կոչվել է տվյալ ճյուղի գլխավոր հերոսի անունով՝ «Սանասար և Բաղդասար», «Մեծ Մհեր», «Սասունցի Դավիթ», «Փոքր Մհեր»: Հերոսների այս չորս սերունդը միմյանց հետ կապված են ազգակցական կապերով: «Սասնա ծռերի» ամենաբնորոշ գիծը հերոսական անպարտելի ոգին է՝ պայմանավորված նրա նախահիմքում ընկած առասպելական դյուցազունների սխրանքներով և հայ ժողովրդի՝ իր ոսոխների, հատկապես արաբական բռնակալության դեմ մղած դարավոր պայքարով: Էպոսի ստեղծման հստակ թվականը մեզ հայտնի չէ, քանի որ վերջինս գալիս է ժամանակի խորքից և ունի պատմական խոր ակունքներ: Էպոսի պատումներից մեկը 1874

թվականին գրի է առել Գարեգին Սրվանձտյանցը՝ հրատարակելով «Սասունցի Դավիթ կամ Մհերի դուռ» վերնագրով: 1889 թվականին էպոսի մի տարբերակ գրի է առել Մանուկ Աբեղյանը, իսկ արդեն 1939 թվականին Հովսեփ Օրբելին՝ էպոսագետների խմբի հետ մեկտեղ, ստեղծում է 60 պատումներից բաղկացած համահավաք բնագիր□ Համահավաք բնագիրը թարգմանվել է ֆրանսերեն, չինարեն, անգլերեն (թարգմանիչ՝ Լևոն Զավեն Սյուրմելյան), հունարեն, ռուսերեն, գերմաներեն, վրացերեն, թուրքերեն, ադրբեջաներեն և այլ լեզուներով:

«Սասնա ծռերի» գրական մշակումները սկսվել են դեռևս 1890-ական թվականներից, սակայն Դավթի ճյուղի լավագույն մշակումը համարվում է Հովհաննես Թումանյանինը («Սասունցի Դավիթ», 1903 թ.): Փոքր Մհերի ճյուղը բանաստեղծական մշակման են ենթարկել ռուս բանաստեղծ Ա.Կուլեբյակինը («Մհերի դուռ», Թիֆլիս, 1916 թ.) և Ավետիք Իսահակյանը («Սասման Մհեր», 1922 թ.): Դավթի ճյուղը մշակել է նաև Եղիշե Չարենցը («Սասունցի Դավիթը», 1933 թ.) և ուրիշներ: Այժմ հայտնի են «Սասնա ծռեր» էպոսի շուրջ 150 պատումներ: Դրանց զգալի մասը տպագրված է: Սակայն դպրոցում և բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսուցանվում է «Սասունցի Դավիթ» էպոսի համահավաք բնագիրը, որը լույս տեսավ 1939 թվականին՝ ակադեմիկոս Հովսեփ Օրբելու մեծարժեք նախաբանով և առավել բարձրարժեք ծանոթագրություններով: Ահա թե ինչ է գրում Ֆ.Ֆեյդին «Սասունցի Դավիթ» էպոսի համահավաք բնագրի վերաբերյալ. «Կարդալով այս ծավալուն ու հոյակապորեն ստեղծված էպոսը՝ կարելի է մտածել, թե այն գերազանց գիտնականների վերածուլած մի ծաղկաքաղ է: Նման բան չկա: Հանձնախմբի անդամները վերաշինել են բնագիրը բանասիրական մանրակրկիտությամբ և գիտական ընդունված խստությամբ: Նրանք չեն ավելացրել անգամ մի տող՝ ծայրը ծայրին բերելու համար: Ողջ բնագիրը ժողովրդական մայր երակից է» :

6

Ակադեմիկոս Հովսեփ Օրբելին էպոսին կցված իր նախաբանում նշում է, թե ովքեր էին այն հմուտ բանագետները, որոնք կազմեցին 1939թ. տպագրված բնագիրը: Նրանք են Մանուկ Աբեղյանը, Գևորգ Աբովը և Արամ Ղանալանյանը: Էպոսի համահավաք բնագրի վերջում դրված են բարբառային բառերի բացատրական բառարան և էպոսում նշված վայրերի անունները:

Էպոսի դյուցազունները՝ Սասնա տերերը, առաջին հերթին մտածում են իրենց ժողովրդի բարօրության մասին: Նախամայր Ծովինարը հանուն իր ազգի դիմում է անձնազոհության, նրա չորրորդ աստիճանի ժառանգ Փոքր Մհերը փակվում է Ագռավաքարում և սպասում համայն մարդկության երջանիկ ու բարեկեցիկ ապագային: Ակամա հիշում ենք Հովհաննես Թումանյանի 1915-ին գրված «Հայրենիքիս հետ» մարգարեական բանաստեղծությունը, որն ավարտվում է համայն մարդկության կյանքի պայծառ արշալույսի երազանքով:



Գլուխ **3**. Հայերնասիրական մոտիվը վիպերգում

Հայ ժողովրդական բանահյուսության հնամենի գանձերին անդրադառնալիս տեսնում ենք նրա ամենամեծ արժեքը՝ «Սասնա ծռեր» վիպերգը, որի իր ճյուղերից մեկի անունով հայտնի է որպես «Սասունցի Դավիթ էպոս »: Այս վիպերգի փառքը ավելի է տարածվում աշխարհով մեկ և արժանանում է միջազգային ճանաչման ու գնահատանքի:

Էպոսն իր հիմնական բովանդակությամբ արտացոլում է Հայաստանում մոտ 250 տարի տևած արաբական լուծը: Էպոսի ընդգրկված ժամանակահատվածը VII-X դարերն են: Սակայն էպոսի պատումների ստեղծումը կապվում է ավելի ուշ ժամանակների հետ[1]: Վիպերգի հիմքում ընկած են բազմաքանակ ապստամբություններ, որոնք հայերը մղել են արաբական խալիֆաթի նվաճողական քաղաքականության դեմ: Ապստամբություններից մեկը մեզ է հասել խութեցիների ապստամբություն անունով: Խութեցիների ըմբոստացումը տեղի է ունեցել 851 թվականին Հովհանի գլխավորությամբ: Խութեցիները հաղթել են արաբներին և սպանել

Յուսոֆ (Հովսեփ) ոստիկանապետին: Այդ մասին մանրամասն պատմում է Թովմա Արծրունին իր «Պատմություն Արծրյունյաց տան» մատյանում :

Էպոսի առաջին գրառողը, որը նաև հայ էպոսագիտության հիմնադիրն է, Գարեգին Սրվանձտյանցը մեր ազգային վիպերգի առաջին ճյուղը կապում է նախաքրիստոնեական ժամանակների հետ: Ասորեստանի Սենեքերիմ թագավորը իր Ադրամելիք և Սանասար որդիներին պետք է զոհ մատուցեր կուռքերին, սրանք էլ սպանեցին իրենց հորը և փախան եկան Սասուն: Էպոսի մեջ այս դեպքերը դարերի հեռավոր արձագանքով հասել են մինչր XIX դարի վերջը և XX դարի սկիզբը՝ մինչև էպոսի գրառումները:

Էպոսն առաջին անգամ գրառել է հայ բանագիտության մեծ երախտավոր Գարեգին Սրվանձտյանցը: Նա լսել էր մեր ազգային վիպերգի գոյության մասին և երեք տարի եռանդագին որոնում էր , մինչև գտավ առաջին ասացողին՝ Մշո դաշտի Առնիստ գյուղի բնակիչ Կրպոյին , որին խնամել է,, խրախուսել, և վերջինս պատմել ՝ մեր վիպերգը՝ խոստովանելով , թե իր պատմածը թերի է, իր վարպետը ավելի երկար էր պատմում, և նրա ասքը շատ տեղերում ընդհատվում էր երգերով:

Գարեգին Սրվանձտյանցը իր գրառած պատումին կցել է բանասիրական բացատրություններ, պատմական ճշգրտումներ, դավանաբանական մեկնություններ, որոնք ընդունվեցին հետագա էպոսագետների կողմից:

Գարեգին Սրվանձտյանցը էպոսին կցված բառաջաբանում ցավով խոսում է նաև իր ժամանակներում նման գործերի նկատմամբ եղած անտարբերության մասին, նա մտավածություն ունի , թե «Գրոց եւ բրոց» գրքույկը ու իր անձը կունենան արհամարհողներ, սակայն իրեն քաջալերված կհամարի, եթե համրանքով գեթ քան հոգի հավանեն իր գործը, և կշարունակի բանագիտական իր գործունեությունը՝ խրախույս կարդալով ուրիշներին, որ հետևել իրեն, աշխատասիրություն ձեռք բերեն և հրատարակեն նման գրվածքներ:

Հաղթեց բանագետի համառ կամքը, և նրա լուսավոր ճանապարհով ընթացան նոր բանահավաքներ և էպոսագետներ: Դրնցից են Մանուկ Աբեղյանը, Երվանդ Լալայանը, Սարգիս Հայկունին, Կարո Մելիք-Օհանջանյանը, Սարգիս Հարությունյանը և ուրիշներ:

«Սասունցի Դավիթ» էպոսի առաջին գրառումը լույս է տեսել 1874-ին «Գրոց եւ Բրոց, Սասունցի Դաւիթ և Միեր» խորագրով:

1930-ական թվականներին հայ էպոսագիտությունը մտնում է իր զարգացման նոր փուլը: Էպոսագետներ Մ. Աբեղյանի և Կ. Մելիք-Օհանջանյանի ջանքերով մինչ այդ հրատարակված 47 տարբերակները ամփոփվում են երեք ստվարածավալ հատորների մեջ և հրատարակվում 1936,1944,1951 թվականներին:

1939 թվականին հրատարակվում է «Սասունցի Դավիթ» էպոսի համահավաք բնագիրը(կազմողներ՝ Մ. Աբեղյան, Գ. Աբով, Ա. Ղանալանյան), և Խորհրդային Միության մեջ մեծ հանդիսավորությամբ նշվում է հայ ժողովրդական հերոսական էպոսի 1000-ամյա հոբելյանը: Համահավաք բնագրի առաջաբանը գրել է նշանավոր հայագետ Հովսեփ Օրբելին:

«Սասնա ծռեր» վիպերգն իր մեջ պարունակում է հայ ժողովրդի ազգային երազանքները: Էպոսը՝ որպես գրական տեսակ, աչքի է ընկնում իր խոր պատմականությամբ և շեշտված ազգային բովանդակությամբ: Ամեն ժողովրդի էպոս տվյալ ազգի անձնագիրն է, նրանով նա իրավունք ունի ներկայանալու աշխարհին: Մեր էպոսը խորապես ազգային է , նրանում երևում են մեր ազգային բնավորության հիմնական գծերը:

Մեր էպոսը տոգորված է ջերմ հայրենասիրությամբ: Հայրենասիրության առաջին օրինակը ցուցադրում էէպոսի դյուցազունների մայրը՝ Ծովինարը, որը Հայոց Գագիկ թագավորի դուստրն է:

Արաբական խալիֆը հարկի դիմաց պահանջում է Ծովինարին: Գագիկ թագավորը սարսափում է այդ մտքից, որովհետև արաբական խալիֆը քրիստոնյա չէր:

Սկսում են քննարկել տարակարծությունները, որովհետև մերժման դեպքում խալիֆը սպառնում է ավերել Հայոց աշխարհը: Իր հորը ծանր կացությունից փրկում է Ծովինարը. նա բացատրում է իր անձնազոհության կարևորությունը և համոզում է հորը.

- Որ ես էն կռապաշտ թագավոր չառնեմ,
Զամեն տի սպանի իմ պատճառով,
Աղեկն էն է, ես էրթամ,
Ուրիշ մարդու թող բան չլընի:

Հայրենասիրական այս արմատից են ծնվում Սասնա դյուցազունները և իրենց գործերով ապացուցել ե անսահման նվիրվածությունը հայրենի հողի և նրա սրբությունների նկատմամբ: Էպոսի բոլոր ճյուղերի հանգուցակետը երրորդն է՝

Սասունցի Դավթի ճյուղը, և, իհարկե, ամենահայրենասիրականը: Դավթին հաջողվում է ոչ միայն ազատել հարկերից Սասունը՝ Հայաստանը, այլև դուրս քաշել օտար զավթիչներին իր հողից:

Մեր ազգային վիպերգը փառաբանում է աշխատանքը, աշխատավոր մարդուն: Էպոսի գլխավոր հերոսները միշտ օգնում են գյուղացիներին, բոլոր խեղճ մարդկանց: Իրենց բերդը կառուցելուց առաջ Սանասարը և Բաղդասարը նախ տներ են կառուցում հասարակ մարդկանց համար.

- Առաջ շինենք զէդոնց տներ,
Ու նոր շինենք զմեր բերդ.

Իրենց կառուցած հզոր բերդի անունն էլ Սանասարը և Բաղդասարը դնում են ըս մի ծեր պապիկի բնորոշման՝ Սասուն: Սանասարն ու Բաղդասարը Հայոց Գագիկ թագավորի թոռներն էին, սակայն իրենց վարքագծով նարնք տարբերակում չեն դնում տոհմիկ արքայազնի և հասարակ ու պարզ մարդկանց միջև, շարունակ մտածում են ուրիշների մասին, պարգևում նրանց իրենց հոգատարությունն ու ջերմությունը:

«Սասնա ծռեր» վիպերգում դյուցազունները պայքարում են ոչ միայն արտաքին նվաճողների դեմ, այլև հանուն երկրի ներքին կյանքի արդարության: Նրանք չեն հանդուրժում գերհարուստ վիշապներին և դևերին, խլում են հարստությունը նրանցից և հալալ ձևով բաժանում հողի աշխատավորներին:

Երկրորդ ճյուղի գլխավոր հերոսը՝ Միհրը, իր քաջագործությունը կատարում է հանուն իրբերկրիբժողովրդի: Նա սպանում է Սասուն եկող հացի ժանապարհը փակող առյուծին և կոչվում է Առյուծաձև Միհր, այսինքն՝ առյուծ պատռող Միհր:

Մեր էպոսում կա մի խորհրդանշական իմաստ պարունակող դրվագ: Դավիթը վերաշինում է իր հոր Մարութա վանքը, սակայն վանքի կառույցը շարունակ քանդվում է:

Գիշերը երազում Դավթին երևում է Աստվածածինը և պատվիրում վանքի պատի մեջ դնել Դավթի սուրը:

Այդպես էլ անում են, և վանքը մնում է կանգուն: Վիպերգի այս դրվագում իմաստավորված է հայ ժողովրդի դարավոր կենսափորձը. ամեն երկրի ստեղծագործ աշխատանքը ապահովելու համար պետք է ունենալ ռազմական, ինքնապաշտպանական խիզախություն: Այս խորիմաստ բանաձևը կա

տարբեր ժողովուրդների բանահյուսություններում: Հանճարեղ կինոռեժիսոր Սերգեյ Փարաջանովը այդ իմաստությունը պատկերել է իր ֆիլմերից մեկում՝ Սուրամի ամրոցի շինությունը նկարելիս.պատը կանգուն է մնում , երբ նրա մեջ կենդանի կենդանի շարում են երիտասարդ մարդուն: Սա, իհարկե, խորհրդանիշ է, և որպես

այդպիսին՝ անձնազոհության մարմնացում է ներկայացնում, խորհրդանիշի բացատրությունը ավելի քան պարզ է և իմաստալից. ոչ մի մեծ նախաձեռնություն չի կարող իրականանալ առանց թանկ զոհողությունների:

Մեր էպոսում կա երկրագնդի բոլոր մարդկանց ուղղված մի պատգամ, այն է, ՝ սիրիր քո հայրենիքը , բայց հանդուրժիր, որ օտարն էլ իր երկիրը սիրի, մի թող օտարին, որ նվաճի քո հողը, լուծ դնի քո վրա, սակայն նույնը դու երբեք մի արա, սիրիր օտարին հարևանությամբ, բարի դրացիության ազնիվ սկզբունքով[1]: Այս առումով «Սասնա ծռերը» իր պատգամներով բացառիկ է աշխարհի վիպերգերի մեջ: Մարդասիրական այս պատգամները էպոսում հղվում են արաբ ծերունու և Սասունցի Դավթի փոխհարաբերությունների միջոցով:

Էպոսում հայ ժողովուրդն իր ազգային բնավորության գծերը մարմնավորել է Սասունցի Դավթի կերպարում: Բոլոր ազգերի էխոսների գլխավոր հերոսները հավաքական կերպարներ են, նրանցում խտացած են ամեն մի ազգի բնավորության լավագույն գծերը:

Դավթի կյանքն էպոսում պատկերված է ծննդյան օրից մինչև մահը: Նա Սասնա դյուցազունների մեջ ամենահմայիչն է, ամենատեսանելին, ամենագեղեցիկը: Դավթի մանկությունն իր մանրամասներով շատ հետաքրքիր է: Ծնված պահից որբացած Դավիթն իր մանկությունն անց է կացնում օտարության մեջ ՝ Մըսրում: Նա, սակայն,
սնվում է Սասունից բերված յուղով ու մեղրով: Դավիթը հրաշապատում հեքիաթի հսկայի մնան արագ մեծանում է, հզորանում, սակայն միաժամանակ նա իսկական միամիտ երեխա է, որին դեռևս անծանոթ են կյանքի մեծ ու մանր նենգությունները:

Ուժի կողքին Դավիթն ունի մի կարևոր բնավորության գիծ՝ ազատատենչ է,
բռնակալին ենթարկվել չգիտի, նա չի անցնում Մսրա Մելիքի թրի

տակով. Դավիթ չը գնաց, չանցավ թրի տակով,

Կշտով անցավ.

Ճկութ քսվավ ի ջարդու քար՝

Քարեն կրակ էլավ:

[1] Ղևոնդ, Պատմություն, Թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրությունները Արամ Տեր- Ղևոնդյանի, Երևան, 1982, էջ

Ժողովուրդը Դավթի մեջ շեշտել է նրա բացառիկ առաքինությունները: Դավիթն անգամ Մսրա Մելիքի նենգությունից, իրեն փոսը գցելուց հետո էլ մնում է մեծահոգի և իր առաջին զարկերը զիջում է Մսրա Մելիքի մորն ու քրոջը՝ հիշելով մանկության օրերին նրանց խնամքը իր նկատմամբ:

Դավիթը սիրված անձնավորություն է, որովհետև ինքն էլ սիրում է իր հայրենակիցներին, մարդկանց: Նա գիտի հարգել մեծերին. ուշադիր լսում է արաբ ծերունու , արտատեր պառավի խորհուրդները:

Էպոսն ունի դաստիարակչական նպատակներ. այն ուզում է իր ազնվագույն երազանքներով շտկել կյանքի ստվերոտ կողմերը, տարբեր ժողովուրդների միջև հաստատել բարիդրացիություն:

Էպոսի հարստությունից են կին հերոսների կերպարները: Ծովինարը՝ առաջինն այդ կերպարների մեջ, հանդես է գալիս հայրենի սրբությունների նկատմամբ իր շեշտված վերաբերմունքով: Արտասովոր կանայք են Արմաղանը, Խանդութը, Գոհարը: Կին հերոսներից ուշագրավ է արտատեր պառավը, որն իր մեջ ամփոփում է հայ կնոջ դարավոր իմաստությունը: Նա ժողովրդի մշտարթուն ոգու կրողն է, իր ազգային հերոսին ոգևորող ժողովրդի մարդը[1]: Այսպիսի կանանց համար ազգային հերոսը վեր է ամեն ինչից , նրանք ազգային հերոսներ արարողներն են՝ բոլոր ժամանակների համար:

Մեր ազգային հերոսներն ունեն ընդհանուր գծեր, սակայն նրանք խորապես անհատականացված կերպարներ են: Երբեք չի կարելի շփոթել Սանասարին Մեծ Միհերի, Դավթի և Փոքր Միհերի հետ: Նույն կերպ անհատականացված են նաև կին հերոսները:

«Սասունցի Դավիթ» էպոսը մեկնաբանելիս Հ.Օրբելին «Նախաբանում» համառոտ ներկայացնում է այն երազանքները, որոնք հայ ժողովուրդը դրել է ազգային էպոսում:

12

Էպոսի դյուցազունները մերժում են նվաճողական պատերազմ հրահրողներին և նրանց ողջ պայքարը հենց նման զավթիչների դեմ է, էպոսի գլխավոր հերոսը «ջերմ ու անաղարտ սիրտ ունի», օգնում է բոլոր անպաշտպան մարդկանց ու սխրագործություններ է կատարում հանուն իր հայրենիքի ու ժողովրդի բարօրության[1]:

Քանի որ տարրական դասարաններում էպոսի հերոսներից միայն Դավթին են ծանոթ , մենք չենք անդրադառնա մանրամասնորեն մնացած կերպարներին և կանգ կառնենք

[1] Հ. Օրբելի, Հայկական հերոսական էպոսը, Երևան, 1961, էջ 64,

այս կերպարի վրա և հետազոտելով ցույց կտանք, թե ինչպես նրա կերպարի միջոցով սովորողների մեջ սերմանել հայրենասիրություն և ազգային արժեհամակարգ:

Գլուխ **4. 9**-րդ դասարանում դասավանդելու մի քանի մեթոդներ

Ըստ Գրականություն առարկայի հաստատված օրինակելի ծրագրի՝ էպոսի ուսուցմանը իններորդ դասարանում հատկացված է տասը դասաժամ: Երեխաներն ամառային արձակուրդի ընթացքում ընթերցել են էպոսը, դուրս գրել ամիսկանալի բառերը և ուսուցչի ու բարբառային բառարանների միջոցով բացատրել դրանք:

Ապա հնչում են հարցադրումներ: Տողատակով ներկայացնում ենք հնարավոր պատասխանները, որպեսզի ավելի հստակ պատկերացում կազմվի էպոսի բարոյագիտական արժեքի վերաբերյալ. ա) Ի՞նչ է անում հերոսը «Սասունցի Դավիթ» էպոսի գլխավոր հերոսը՝ Սասունցի Դավիթը, <u>փրկում է Հայաստանն արաբական լծից:</u>

բ) Ի՞նչ է ասում կամ մտածում հերոսը Սասունցի Դավիթը ողջ էպոսի ընթացքում <u>արտահայտում է բազմաթիվ իմաստուն մտքեր, որոնք այսօր էլ մեծ արժեք ունեն:</u>

Գրի ենք առնում Դավթի իմաստուն մտքերն ու առանձնացնում դրանց մեջ ամենաէականները՝

1. Դավիթը բացատրում է, թե որևէ այլ երկիր իրավունք չունի խառնվելու իր հայրենիքի գործերին. ամեն երկրի գահակալ թող զբաղվի միայն իր երկրի գործերով. - Դե, գնա, թագավորիդ բարև արա, ասա. Էն Մհերի տղա Դավիթն էսպես արեց. Մեկ էլ չը գա՝ Սասնա կընիկ, աղջիկ տանի՛. Սասնա տուն դեռ չի ավերվե, Որ դուք էկե մեզեն խարջ ու խարաջ կ՚ուզեք: Մըսրա գավառ իրեն, Սասնա գավառ մեզի: Թե չէ՝ ինչ իրմեն կը գա, թող չը խնայի:

2. Դավիթն արքունացնում է Մսրա զորքին և միայն դրանից հետո է նետվում մարտի դաշտ:

3. Դավիթն ազատ է արձակում Մսրա Մելիքի զորքին և զգուշացնում, որ մյուս անգամ չգան Սասունի վրա, այլապես կպատժվեն, ինչպես Մսրա Մելիքը:

4. Դավիթը պատժում է իր վրա կռիվ եկած թշնամիներին, նրանց փոխարեն թագավոր է կարգում հասարակ մարդկանց և խոստանում պաշտպանել նրանց վտանգի պահին. Քաղքի մեջ ով մնացեր էր, Էնոնց համար թագավոր դրեց. Ջոջ մարդեր սպանեց, Պստիկներ տեղ դրեց, ասաց. -Քանի դու ժիր եք, կռիվ միք է՛րթա: Որ դու նեղ կը՛նկնեք, Ինձի մի թուղթ գրեք, ես կը գամ:

գ) Ինչպե՞ս են ուրիշները վերաբերվում կերպարին

1. <u>Դավթին սիրում են Սասունի հասարակ մարդիկ:</u>

<u>*2.* Դավթի համար սրտացավ է Ջենով Հովանը:</u>

3. <u>Դավթին ճիշտ ուղղության է մղում արտատեր պառավը:</u>

<u>*4.* Մսրա Մելիքն ատում է Դավթին և նրա մեջ տեսնում հավերժական թշնամի:</u>

5. Դավթին սիրում էր Զմշկիկ Սուլթանը, սակայն Դավթի ու Խանդութի ամուսնությունից հետո նենգորեն սպանել է տալիս նրան:

6. Դավթին անամոթ առաջարկներ է անում և հետապնդում Ջենով Հովանի կինը՝ Սաբիեն:

7. Դավթին անսահման սիրում էր կինը՝ Խանդութը, որը վերջինիս մահվանից հետո ինքնասպան է լինում:

8. Դավթի մահվան վրեժը հանում է որդին՝ Փոքր Մհերը:

դ) Ինչպե՞ս է կերպարը փոխվում

1. Դավիթը սկզբում շատ միամիտ էր:

2. Դավիթը լիովին փոխվում է, երբ արտատեր պառավը նրան խորհուրդներ է տալիս ու առավել բորբոքում հայրենասիրական կրակը:

3. Խանդութին տեսնելուց հետո Դավիթը դառնում է իր կնոջն անմնացորդ նվիրված ամուսին:

ե) Հեղինակի թեման կամ տեսակետը

Հեղինակը ժողովուրդն է, որ դարերի ընթացքում ավելի հղկել ու պանծացրել է իր սիրելի հերոսի կերպարը:

Հազար անգամ իրավացի է ժողովուրդը, որի կարծիքով իդեալական մարդիկ չկան, եթե անգամ դա իրենց սիրելի հերոսն է՝ Սասունցի Դավիթը: Ժողովուրդը ցավով ներկայացնում է, թե ինչպես շիտակ, ազնիվ, անձնազոհ, նվիրված Դավիթը մի անգամ սխալվում և երդմնազանց է լինում:

Նա նշանված էր Զմշկիկ Սուլթանի հետ, սակայն Խանդութին հանդիպելուց հետո մոռանում է Զմշկիկ Սուլթանին տված խոստումը, և նենգ Զմշկիկն իրենց ընդհանուր աղջկա ձեռքով սպանում է Դավթին. - Իմ ցեց իմ անձից է, էդ իմ սերմն էր, որ ինձի սպանեց: Դավիթ էդ խոսք ասաց, Ու ինքն էլ էնտեղ մեռավ: Դասարանը կահավորում ենք էպոսի թեմաներով ստեղծված նյութերով՝ Հ.Կոջոյանի նկարների, Հր.Քոչարի «Սասունցի Դավիթ» արձանի վերատպությունները, գրքեր (էպոսի տարբեր հրատարակություններ, գրական մշակումներ՝ Թումանյանի «Սասունցի Դավիթ»-ը, Իսահակյանի «Սասմա Մհեր»-ը, Զարենցի «Սասունցի Դավիթ»-ը, Հ.Օշականի «Սասունցի Դավիթ թատերգությունը»): Պատերին փակցված պաստառներին մեծերի խոսքերն են էպոսի մասին: Օրինակ՝ «Ոչ մի բանի մեջ ժողովուրդներն այնքան պարզ ու պայծառ չեն երևում, որքան էպոսում» (Հ. Թումանյան): Մինչ էպոսի ուսումնասիրության ավարտը դասասենյակի՝ էպոսին հատկացված անկյունում ավելանում են աշակերտների՝ էպոսի թեմաներով արած նկարները, ստեղծած տիկնիկ կերպարները: Թղթապանակների մեջ աշակերտները հավաքում են իրենց գրած ռեֆերատները, շարադրությունները, մտքերը, բանաստեղծություններն էպոսի թեմաներով: Աշակերտների մի խումբ էլ աշխատում է էպոսից իրենց ընտրած հատվածի բեմականացումը պատրաստելու համար: Տալիս եմ առաջադրանք՝ համեմատել հին և նոր էպոսները, ապա գրել ընդհանրությունները (Վենի դիագրամ մեթոդ): Հին էպոս ենք պայմանականորեն համարում ժողովրդական բանահյուսությունից մեր անցած նախորդ նյութերը՝ Գողթան երգերը, առասպելները՝ ամբողջացրած «Վիպասանք»

վերնագրի տակ: Հանձնարարում եմ համեմատել հին և նոր էպոսներում ժողովրդական մտածողության դրսևորումները և այլն: Աշակերտները հիմնականում կարողանում են արտահայտել իրենց մտքերը:

Բոլոր դեպքերում նրանք չեն կորցնում իրենց մարդկային կերպարը. արդարամիտ են, վեհանձն, մանկական մաքուր պարզությամբ, բռնության դեմ՝ անողոք: Սասնա դյուցազունների չորս սերունդներն էլ բնութագրվում են հայրենիքին ու ժողովրդին անձնուրաց ու անմնացորդ նվիրվածությամբ, նվաճողների և բռնակալների նկատմամբ հետևողական վճռականությամբ մղած պայքարով: Հազարամյակներ շարունակ անհավասար մաքառումների մեջ սեփական գոյության իրավունքը հաստատելու համար մղած պայքարն են ներկայացնում նրանք՝ պահպանելով մեր ազգային արժեքները, որոնք ժամանակի ընթացքում փոխում են իրենց ձևը, բայց բովանդակությունը նույնն է մնում:

Հատկապես Սասունցի Դավթի կերպարի միջոցով սիրելի հերոսի սխրագործությունները պատկերելիս ժողովուրդը ազատություն է տալիս իր երևակայությանը, հիպերբոլիկ պատկերներով պանծացնում նրան: Իսկ բռնակալ Մելիքին և նրա կամակատարներին սպանիչ ծաղրով է ներկայացնում: Ասվում է, որ մեր էպոսում ամրագրված արժեքները դեռևս պահպանում են իրենց կենսունակությունը (վկան՝ ապրիլյան քառօրյա պատերազմը, վերջին պատերազմը): Հետևություն են անում, որ այսօր ինչ կատարվում է, էպոսի մեջ դրա հիմքը կա: Բերում են օրինակներ: Համեմատում են դրական և բացասական կերպարներին՝

- ուժի տեսակետից (Դավիթ և Մելիք),
- երդմանը հավատարիմ լինելու տեսակետից (Արմաղան, ապա՝ Խալիֆ և Մելիք): Իրենք են առաջարկում համեմատության այլ հիմքեր և տալիս պատասխաններ: Խոսում ենք մեր հերոսների նկատմամբ վերաբերմունքի մասին (էպոսում, այսօր): Նկատում ենք, որ կա միտում՝ մեր մեջ եղած ուժեղին թուլացնելու: Էպոսից Խանդուրի երկրպագուների կողմից Դավիթին խմեցնելով թուլացնելու օրինակն են բերում, այլ օրինակներ՝ մեր պատմությունից և այսօրվա իրականությունից:

Էպոսի գաղափարական գծերից է ազատասիրությունը: Այնտեղ ազատությունը ներկայացվում է որպես բնական իրավունք ամեն մի մարդու համար: Հերոսները, պաշտպանելով իրենց ազատությունը, ուրիշներին չեն զրկում այդ իրավունքից: Սասունում բոլորը հավասար են և ազատ: Իրենց համար հատուկ կարգավիճակ մարդկային որևէ խմբում (ընտանիք, ազգակիցներ, համերկրացիներ և այլն) չեն էլ գիտակցում, ուր մնաց՝ պահանջեին: Նրանք ազատ էին ու վեր մարդկանց ստեղծած արհեստական օրենքներից: Աշակերտներին առաջարկում եմ կարծիքներ փոխանակել ազատության մասին այսօրվա պատկերացումների շուրջ:

Գաղափարական բովանդակության գծերից է պետականության նկատմամբ ունեցած վերաբերմունքը, որը մեր էպոսում կարևորվել է և դրսևորվել տարբեր հերոսների արարքներում և խոսքերում: Օրինակ՝ Ծովինարը Խալիֆին հարցնում է, թե նրանց երկրում կարգ, օրենք չկա՞, որ հղի կնոջն ուզում են սպանել: Ջենով Օհանը Դավիթին ասում է. «Եթե մենք մեր դրած օրենքը չպահենք....»

Կամ, ասենք, Քեռի Թորոսի օրինակը. Սասնա բոլոր հերոսները մեռան, Քեռի Թորոսը չմեռավ, իսկ երբ Փոքր Միհրը մնաց անժառանգ և անմահ (հայրական անեծքը գործեց), Քեռի Թորոսը «կսկծու» մեռավ (որովհետև պետականությունն էլ չէր շարունակվելու):

Նրանք պայքարում են ժողովրդի շահի համար, իրենց համարում են նրա մի մասնիկըՀարուստ ու բազմազան են էպոսի գաղափարական բովանդակության այս կամ այն գիծը ներկայացնող օրինակները: Դրանք դուրս են գրում և ներկայացնում

աշակերտական խմբերը, որոնցից յուրաքանչյուրին հանձնարարվում է գաղափարական բովանդակության մի գծի վերաբերյալ էպոսից բերել օրինակներ: Առաջարկում եմ պրոբլեմային զանազան հարցեր, օրինակ՝

16

- Սասունը հիմնում են Սանասարը և Բաղդասարը, ինչո՞ւ է հենց Դավիթը կոչվում Սասունցի,
- նոր ծագող արևը կար (Մեծ Մհեր), էլ ինչո՞ւ էր պետք մայր մտնող (Փոքր Մհեր) արևը,
- հողեղեն Դավթից հետո ինչո՞ւ մեր ժողովրդի վերջին հերոսը (Փոքր Մհերը) լույս դարձավ,
- ժողովուրդներն իրենց մտածողությամբ նմա՞ն են, բերել օրինակներ,
- ինչո՞ւ է Մելիքը հորի մեջ մեռնում (որովհետև չար ուժերը գետնի տա՞կ են): Գաղափարական բովանդակությունն ուսուցանելիս շեշտում եմ, որ մեր հայրենիքը մեր քրիստոնյա էությունն է, աստվածատուր մեր ինքնության կերպը, մեր տեսակը, որ պիտի կրենք: Հայրենիքի ոչ միայն տարածքային-նյութական ընկալում պիտի ունենանք, այլև հոգևոր: Հայրենիքը մարդկանց տվյալ հանրության հոգևոր աշխարհի կերպն է: Գաղափարները, որոնք ներկայացվում են էպոսում, այն դարձնում են մեր ժողովրդի ինքնության վկայագրերից մեկը և մեր ժողովրդի՝ էությամբ քրիստոնյա լինելու ապացույցն են: Ինչո՞ւ ծռեր: Դասագրքում մեկնաբանված է, որ ժողովուրդն իր սիրելի հերոսներին «ծուռ» է կոչել՝ նկատի ունենալով նրանց՝ սովորականից շեղված, արտասովոր, խենթ, քաջազուն լինելը: Ավելացնում եմ ևս մեկը: Քանի որ մեր «ծուռ» հերոսները մեր ժողովրդի մարմնավորումն են, նրանց մեջ ժողովուրդը տեսել է ինքն իրեն՝ քրիստոնյային՝ աստվածաստեղծ մարդուն, որն ի սկզբանե շեղվեց աստվածադիր օրենքներից և ծռվեց (մեղք գործեց), ուստի էպոսի գլխավոր հերոսները, մարդ-կատարյալների դասին պատկանելով անգամ, ծուռ են: Այսինքն՝ նրանք վերացական կերպարներ չեն, այլ իրական մարդիկ՝ իրենց թերություններով ու առավելություններով:

Այս ծռերը պայքարում են չարի դեմ: Էպոսում չարի դեմ պայքարն է առաջին պլան մղված: Այդ չարը նվաճող, հարկապահանջ, իր խակ ժողովրդին հարկադրանքով պատերազմի տանող Մսրա Մելիքն է: Նրան չի սիրում և իր՝ Մսրա ժողովուրդը: Դարեր շարունակ հայերը պետականություն չեն ունեցել: Հայապահպանման անվիճելի գործոն է հայ եկեղեցու գոյությունը: Անգնահատելի է նրա դերը մեր ժողովրդի կյանքում:

Պատահական չէ, որ գլխավոր հերոսը՝ Դավիթը, իր գործունեությունն սկսում է՝ Մարութա սարի վանքը վերականգնելով: Խորհուրդն այս է. Դավիթը ոչ միայն վանքը կառուցեց, այլև վերականգնեց հավատն իր եկեղեցու նկատմամբ: Հիշենք, թե միջնադարում որքա՜ն աղանդներ կային, որոնք մեր Առաքելական եկեղեցու դեմ էին: Անգամ էպոսի գլխավոր հերոսի անունն է Աստվածաշնչից: Փոքր Մհերը զավակ չի ունենում: Գուցե պիտի հասկանանք, որ հայ մարդն իր ֆիզիկական էությամբ հասել է կատարյալ վիճակի, այլևս նրան մարմնական, երկրային կատարելություն պետք չէ, և կարիք չկա նորոգվելու, նոր սերնդի մեջ ի հայտ գալու: Աստվածատուր նրա նյութեղեն ձևը Փոքր Մհերի կերպարում արդեն կատարյալ է: Մենք կատարյալ չենք հոգևոր առումով: Փոքր Մհերը հայ ժողովուրդն է, որ պիտի ապրի աշխարհագրական այս կետում՝ սեղմված ժայռերի մեջ, և պիտի սպասի Քրիստոսի երկրորդ գալստյանը:

«Ցորեն դառնա քանց մասուր մի և գարի՝ քանց ընկույզ մի» արտահայտությունը փոխաբերական միտք է, այսինքն՝ պիտի կատարվի բոլոր քրիստոնյաների երազանքը. նոր աշխարհ պիտի ստեղծվի:

17

Աշակերտները, բացահայտելով էպոսի գաղափարական բովանդակության հիմնահարցերը, կունենան տեսլական՝ ինչպիսի՞ն դառնալ, դեպի ո՞ւր շարժվել: Չէ՞ որ մեր այսօրվա իրականությունը, մեր հեռուստահաղորդումները, մթնոլորտը այն բարեբեր հողը չեն, որտեղ պիտի ծլի ու աճի հայի տեսակը: Մատաղ սերունդը օդի պես կարիք ունի՝ սնվելու մեր ժողովրդական բանահյուսությամբ, մեր դասական գրականությամբ ու արվեստով:

Եզրակացություն

«Սասունցի Դավիթ» էպոսի պատգամների միջոցով հայկական դպրոցներում և բուհերում կդաստիարակվեն ազգային ու համամարդկային ճիշտ գաղափարներով զինված քաղաքացիներ:

Սասունցի Դավիթ էպոսը ունի դաստիարակչական, մարդկային բարձր արժեքներ սերմանող ու հայրենասիրություն քարոզող մեծ նշանակություն: Մի՞թե հավերժորեն ճշմարիտ չէ, որ ժողովուրդները պետք է ապրեն խաղաղության և բարեկեցության մեջ:

Իմ խորին համոզմամբ՝ մարդը կայացման երկար ճանապարհ է անցնում, իսկ անհատականություն է դառնում, երբ հոգով, ավիշով ու արմատներով կապվում է իր երկրի մշակույթին, ազգային կենսակերպին ու կենսաձևին: Աշխարհի յուրաքանչյուր ազգ ու ժողովուրդ երկրի ու երկնքի տարածության մեջ ստեղծում է իր հոգևոր դաշտը, արարում արժեքներ, որոնք ժամանակի ընթացքում դառնում են նաև համամարդկային:

Գրականության ցանկ

1. Невелева С. Л., Махабхарата. Изучение древнеиндийского эпоса. М., 1991
2. ՅՈՒՆԵՍԿՕ-ի պաշտոնական կայք՝ en.unesko.org
3. Ա.Դոլուխանյան, Ֆրեդերիկ Ֆեյդին հայագետ, Երևան, 2008, էջ 185
4. Հ, Բախչինյան. Ս. Սարինյան, Հ.Թամրազյան, Հայ Գրականության դասագիրք 9, Երևան 2000:
5. «Սասունցի Դավիթ», Հայկական ժողովրդական էպոս, էջ 210, Երևան, 1969 : 6. «Սասունցի Դավիթ», Հայկական ժողովրդական էպոս, էջ 270, Երևան, 1969